ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

LOGISTIC SUPPORT DEPARTMENT OF
MINISTRY OF DEFENCE OF THE
REPUBLIC OF ARMENIA

ДЕПАРТАМЕНТ МАТЕРИАЛЬНО-
ТЕХНИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք. Երևան, Բագրևանդի փ.5
E-mail: spitak151@rambler.ru
Հեռ. (+37410) 29-43-97
Ֆաքս (+37410) 29-46-13

5 Bagrevand str.,0044 Yerevan
Ереван, 0044, Багреванда 5
E-mail: spitak151@rambler.ru
Tel. Тел. (+37410) 29-43-97
Fax. Факс (+37410) 29-46-13

№ ПԳՊՀ/3498

«08» 11 2016 թ.

«ԲԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ի տնօրեն
Ն. Ավագյանին
ք. Երևան, Պարոնյան 1/35
էլ. հասցեն՝ bsb19861@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԲԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ի միջև 16.05.2016թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-10/8-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) համաձայն վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2016թ. 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել 450 տոննա «Աձուխ»՝ 53,978,400 դրամ ընդհանուր գնով:

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 կետի «բ» ենթակետը, ինչպես նաև «ԲԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ի կողմից մինչև Պայմանագրի գնման ժամանակացույցով նախատեսված վերջնաժամկետը ընդամենը 91 տոննա մատակարարելու փաստը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2016թ. նոյեմբերի 7-ին միակողմանի, 359 տոննա «Աձուխի» մասով (43,062,768 դրամ ընդհանուր գնով), լուծում է վերը նշված պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «ԲԻ ԷՍ ԲԻ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 753,598.5 (յոթ հարյուր հիսուներեք հազար հինգ հարյուր իննսունութ ամբողջ, հինգ տասնորդական) ՀՀ դրամ՝ որպես պայմանագրով նախատեսված տույժ, ինչպես նաև տուժանք՝ 5,397,840 (հինգ միլիոն երեք հարյուր իննսունյոթ հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ՝ որպես պայմանագրի կատարման ապահովում (կնքված պայմանագրի ընդհանուր գումարի 10 %-ը)՝ 900005000758 հաշվեհամարին:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ